

ՎԱՇԿՆՆ ՏԵՐԵՆՆ

Ստեփան Զօրեանի յուշերէն

Ծննդեան 110-ամեակ և Մահուան 75-ամեակ
(Ախալքալար, Գանձա, 28 Յունուար 1885 - Օրենպուրի, 7 Յունուար 1920)

“ Բորր արեւին իմ բոց սրտում ասում եմ ես մնաւ բարով ”

Վաշան Տէրեանն այն բախտաւոր հեղինակներից է, որոնք մի առաւօտ զարթնում են յայտնի դարձած, և դա ոչ թէ պատահականութեան բերումով, այլ շնորհիւ իրենց մեծ տաղանդի։ Նրա առաջին իսկ գիրքը, ութսուն էջանոց փոքրագիր «Միջնադի Անուրջներ»-ը հռչակեց նրան որպէս բանաստեղծի և պատուաւոր տեղ պահանջեց հայկական պոեզիայում։ Տէրեանի նրա պարակ իմա միանգամից որպէս վարպետ։

«Միջնադի Անուրջներ»-ը յատկապէս ջերմ ընդունելութիւն գտաւ երիտասարդութեան կողմից, և կարճ միջոցում Տէրեանն ունեցաւ հետեւորդների մի ամբողջ բազմութիւն, իսկ երկրպագուներին թիւ կիսուր Մի պահ մոռացուեցին մեր անուանի բանաստեղծները։ ամենուրեք՝ երեկոյններում, ընտանիքներում, ընկերական շրջաններում արտասանւում էին Տէրեանի բանաստեղծութիւնները։ Սկսուել էր պարզապէս Տէրեանեան շրջան։ Օղջ լիքն էր Տէրեանով։ Սրտագին նուէրը միմեանց՝ «Միջնադի Անուրջներ» գիրքն էր։

Ես Տէրեանին ծանօթ չէի տակաւին, երբ առաջին անգամ կարդացի նրա «Միջնադի Անուրջներ»-ը։ Նրա փոքրիկ փողովածուն իմ վրայ բոլորովին նոր, անսովոր տպաւորութիւն արեց թէ՛ իր թարմ պատկերներով, թէ՛ յղուած և յտակ լեզուով, մի լեզու, որ բնաւ նման չէր մինչև այդ եղած մեր բանաստեղծական լեզուին, այնքան նուրբ ու պայծառ, որն ստեղծուել էր կարծես նուիրական, քերուչ զգացմունքներ արտայայտելու համար։ Այդ լեզուն ինձ թւում էր մի այլ, երազային աշխարհի լուսեղէն լեզու։ Ինձ համար նոր էին բանաստեղծի պարուամները, թւում էր թէ՛ աշխան անմերձներին ու մշուշի մէջ թախծում էր մի վշտահար չոգի, որ մութ անտառում մոլորուած արեւ է տեսնում, կարօտ է արեւի։ Բանաստեղծի զգացմունքներն այնքան վարակելի էին, որ իմ մէջ լուրջ կարեկցանք էր զարթնում, և ես հերիսանքի պատկերացում էի տխուր, մեղաւորման մի մարդ։ «Երեւի մի ծանր ցաւ ունի», մտածում էի ես, լիելով գորախո Դուրեանին։



Տէրեանին առաջին անգամ հանդիպեցի 1914-ի Մարտին՝ Թիֆլիսում, «Մշակ» թերթի խմբագրատանը։ Նմազդի առանձնատեսակը մտաւ մի միջնասակ երիտասարդ՝ ձեռնաչին սեւ երկար վերարկու հագած, սեւ, երկար փափախ գրած։ Նիւար էր, թուի դէմքով ու զարմանալի տխուր աչքերով, որոնք խոր ու ներաշնաց նստած էին նրա սեւ, ցածրագիր յոնքերի տակ։ Անքան ընկճուած տեսք ունէր նա, որ առաջին պահ նա ինձ թուաց մահազոյ բերող սովորական մարդ։ Բայց որքան մեծ եղաւ զարմանքս, երբ խմբագիրը նրան ընդունեց սիրով և աշխատեց ինձ հետ։

Դա Վաշան Տէրեանն էր Մոսկուայից գնացել էր գիւղ, Շորը թաղել և հիմա վերադառնում էր Մոսկուա։ Անա ինչու աշխատե տխուր էր։ Երեւի միշտ էլ այդպէս է այդ մարդը, և այդ վիշտը յատուկ է նրան։ Բայց ինձ օտարոտի էին թւում նրա սեւ, երկար վերարկուն և կովկասեան փափախը, որոնք բոլորովին դուրս էին արդէն իմ պատկերացումից և բնաւ չէին յարմարում Տէրեան-բանաստեղծին։

Երբ 1914-ի ամառը նորից հանդիպեցինք, այս անգամ Տէրեանը թէ՛ արտաքուստ, թէ՛ ներքուստ բոլորովին այլ տպաւորութիւն թողեց վրաս։ Նախ վերադառելով ու փափախով չէր, այլ գլխարկով և նոր քոսթիմով։ Մաքուր անխուած էր, օւլայաւած եներթիվ օձիքով և փայլուն փողկապով, ձեռնափայտով։ Միւս կողմից պարզուեց, որ նա բնաւ տխուր, մեղաւորման մարդ չէ, ինչպէս թուացել էր առաջին հանդիպումիս, այլ շատ կենսաւորաբար էր, գուարճարան, յաճախ սրամիտ ու խաղաղ։

Ինձ զարմացում էր Տէրեանի բնաւորութեան մի այլ գիծը, արդէն ընդունուած, անուանի բանաստեղծ, մայրաքաղաքում ապրած մարդ՝ նա անծանօթ կամ սակաւ ծանօթ մարդկանց շրջանում իրեն պահում էր մի տեսակ ամօթխած, ինչպէս դաւաճացի համառ պատանի։ զրոյցի փամանակ մտում էր ինքնամփոփ, եթէ շատեմ քաղուած։ Բայց դրան հակառակ, ընկերների շրջանում ասում, խոսում էր դուարթ, կատակով, ծիծաղում համարձակ։ Մանաւանդ սիրում էր լրբել ընկերների հետ և զրուցել, զրուցել...

1916 թուին Տէրեանը Մոսկուայից եկաւ Թիֆլիս՝ Գարունը գրական տարեգրքի համար նիւթեր հաւաքելու:

- Ուզում ենք Պարունը դարձնել երիտասարդների օրկան: Մի թաւժ հասնել, մի նոր շարժում պէտք է առաջ բերել մեր գրականութեան մէջ: Ուզում ենք որ 35-ից բարձր տարիք ունեցողները չմտնակցեն, այլ միայն երիտասարդները, - ասում է Տէրեանը:

Մոսկուայում մի քանի մտերիմ շփոխներէի հետ Հինգէն էին Պանիկեանը հրատարակութիւնը, որ պէտք է հրատարակէր օտար գասական լեզուականներ գործերը, ինչպէս նաեւ երթասարդ արձակագիրները և բանաստեղծները գործերը:

Շուտով լուրեր եկան թէ նրա առաջական վիճակն այնքան էլ լաւ չէ: 1917-ին թացրի Հիւանդութիւնն այնքան սաստկացաւ, որ նա գնաց Սփրուստ րուժակներ: Սակայն փեթաբուրեան յեղափոխութեան դէպքերը թոյլ չտաին երկար մնալ, ակնյի հիշող՝ նա չհամարեց քուժումը թողած՝ վերադարձաւ Թիֆլիս՝ յեղափոխութեան եռուղեւուն մասնակցելու:

- Ձեզ լաւ էք գիտէ՞ք... Հարցրի ես:

- Ի հարկէ ոչ: Մի շատ գրողի բան է այդ րուժարան կոչուածը, ուր ձանձրոյթից մարդ կարող է մեռնել: Յետոյ, աշխարհում այսքան բան է կատարուում, ինչպէ՞ս համբերեմ...

Կեանքի ծանր կանչել էր նրան, այնքան րուռն էր գործին: Եռանգը, անգամ այդ Հիւանդ վիճակում: Չնայած որ նա խոսում էր հեռագով, քայց դէմքը գուարթ էր, պատրաստ՝ կատարներ անելու: Ի դուր չէր որ նա փախել էր րուժարանից:

1919 թուի գարնանը, Տէրեանից ինձ լուր րեւցիւն՝ Հիւսիսային Կովկասից, ուր եկել էր նա արեւմտահայ գաղթականների տեղաբնակ գործը կազմակերպելու: Լրարեւի խնդրել էր յայտնել, թէ չուտով մտադիր է գալ Անդրկովկաս՝ առողջութիւնը վերականգնելու: Այդ Տէրեանի վերջին կապը եղաւ ինձ հետ: 1920 թուի Յունուարին Մոսկուայից լուր եկաւ նրա մահուան մասին:

* * *

1967 թուի ամբարն, մի խումբ գրողներով ուղեւորութեանց Գանձա գիւղը՝ վաճառ Տէրեանի ծննդավայրը: Մեր ինքնաշարժը առաջ էր շարժում բարձրագիւր լեռնադաշտն ի վեր: Անա երեւաց վեհապանն Արուլը՝ Գուգարաց աշխարհիճ հակա լեռնապագայներից մէկը: Միւս կողմից Սաղամոճ լիճն էր վէտվտում չքեղապարջ հովտում: Ամենուրեք աշխարհան փարթած կանաչն էր աչքը չլուում, ու թաշանած մարդագետին վրայ րիւրաւոր գոյնգոյն ծաղիկներ էին վառում: Անա և Գանձա գիւղը: Թեքաւարժիք ինչնով՝ գիւղի նեղ ու խճանքանկ փողոցով գնում

ու հասնում ենք միայնակ մի տուն, որի նակատին փակցուած ցուցանակի վրայ գրուած է՝ Վաճառ Տէրեանի տուն-Թանգարան:

Մտնում ենք փոքրիկ բակը: Մեզ գիմաւորում է Տէրեանի քրոջ աղջիկը՝ Արուսեանը, և առաջնորդում մի ոչ այնքան ընդարձակ սենեակ, որի պատերին րազմաթիւ նկարներ կան, յուշագրեր:

- Սա վաճառի ննջարանն է: Անա այս Թախտի վրայ էր նա քնում մանկութեան և պատանեկութեան հասակում, րացատրում է Արուսեանը:

Բոլոր էլ, յատուկ ուշադրութիւն ու հետաքրքրութիւն դարձած՝ մեր չուրջն ենք նայում: Պատերից կախուած են դանազան ժամանակներում նկարուած լուսանկարներ, որոնք ներկայացնում են Տէրեանին իր հարազատների, ընկերների, ժամանակակից նշանաւոր դէմքերի՝ Թումանեանի, Իսահակեանի և այլոց հետ: Ներսէս են մտնում մի քանի տարեց աղամարդիկ և կանայք, բանաստեղծի համադիւղացիները, և մեր մէջ սկսում է աշխույթ խոսակցութիւն, հարցուփոքր:

Արուսեանը տուն-Թանգարանի վարիչն է: Անա նա գիտւմ է և մի րարձատեսակ կեռք րերեղով նստեցնում է կողքիս ու ասում.

- Սա Շուշանն է, վաճառի մանկութեան ու պատանեկութեան օրերի խաղըկները: Թող պատմի նրա մասին ինչ որ գիտէ...

Չնայած պատկառելի տարբիքի, Շուշանը տակաւին կայտառ է, առողջ:

- Ես վաճառին լաւ գիտում, միասին ենք մեծացել, մանուկ օրերին շատ ենք խաղացել փողոցում, Փարսնաճ լճի մօտ: Աշխույթ աղայ էր վաճառը, ուժեղ, չարաճճի: Գնաց քաղաք, ուսում ստացաւ, մեծ մարդ դարձաւ: Ափսոս, հազար ափսոս, չուտ մեռաւ մեր վաճառը: Շատ րան են պատմում վաճառի մասին...

Տէրեանի հասակակից գիւղացիները ինչպէս հետաքրքրական դրուագներ էին պատմում նրա կեանքից: Բաւական ժամանակ գրուցելուց ու չուչեր լսելուց յետոյ մենք լուսանկարուցեցիք՝ մի կողմ՝ Շուշանը, միւսիս՝ Արուսեանը, Տէրեանի հարազատները:

Իրիկնադէմն մեզ առաջնորդեցին գիւղի եայրան՝ մի չքեղա ծաղկափրփուր դարաւանդ: Ներքեւում, վեհախառ Արուլի տակ, Փարսնան էր օրորում պլրալի գեղեցկուհւ պէս, իսկ վերեւից, րարձրաբերձ մթին սարերից զովաշունչ գեփիւռն էր շարունակ սլաւում ու մեզմ փափախում:

Ձգացիք թէ ինչպիսի՞ հրաշալի վայրում, հեռաւոր լեռներէ ինչպիսի՞ հմայիչ տառամուրթեան մէջ են սնցել սիրելի բանաստեղծի մանկութեան ու պատանեկութեանը: Եւ այդ րեռութեան հմայքներն են նրա օրաւը լցրել ինձ յուզեղով, քեռու անուրջներով:

1 Սփրուստ - օղափոխութեան քաղաք: Սև Խովուն եղբւրք:

2 Արուլ - լեռ մը՝ Գանձա գիւղին մօտ:

3 Գուգարաց աշխարհ - Պատմական Հայաստանի նահանգներէն մէկը, որ կը կազմէր Հայաստանի և Վրաստանի սահմանը՝ տարածուելով Գանձակէն մինչև Արտանու:

4 Սաղամոճ և Փարսնա - Գեղեցիկ լիճեր: Անալապաթի լիճերն են, որ հին ատեն Գուգարաց նահանգի գաւառներէն մէկն էր: